

նորոգութեան ընդ ձեռն ծերունի Սահակ վանահօրն:

Թուղթ նոյն կաթուղիկոսի վասն արձակման յիշեալ առաջնորդին, որով ի խնդրոյ Իբրահիմ Խալիլ Խանի և Մէլիք Յովսէփոյ արձակէ զնա ի բանադրանացն:

1770 ՌՄԺԹ

Թուղթ նոյնոյ առ ժողովուրդն Չամախու վասն նոյն Իսահակ վարդապետին արձակելոյն ի բանադրանաց որ վասն ընդունելոյ ի վանս Սաղիանու զԻսրայէլ կաթուղիկոսն և ոչ զՅովհաննէս կաթուղիկոսն :

1770 —

Ի Տօմարին ընդ համարաւ 749

Նոյնոյ թուղթ՝ ի Չամախի վասն անկարգութեանց Իսրայէլ կաթուղիկոսի Աղուսնից:

1772 ՌՄԻԸ

Ի Տօմարին ընդ համարաւ 752

107 Կոնզակ Ղուկաս կաթուղիկոսի առ պարոն գանձապետ Դաւիթն ի Շամախի վասն ժողովելոյ զգանձանակադրամս Աթոռոյս: 440 Առ Յովսէփ, Յովհաննէս և Բաբսեղ քահանայս Բազուայ և առ պարոն Դաւիթ եւայլ իշխանս վասն յանձնելոյ զգանձանակադրամս Ս. Էջմիածնի նախարակ Յակօբ վարդապետի, և թոյլազրէ Բազուեցւոյ շինել զեկեղեցին ի Մահլալոյջն:

1784 ՌՄԼԳ

519 Կոնզակ նոյնոյ՝ առ գանձապետ Եղիազարն ի Բազու, որով պատուիրէ օգնել ժողովրդեան ի շինել զեկեղեցին ի Մահլալոյջն, և յանուն եկեղեցւոյ ժողովեալ դրամս յանձնել ժողովրդոց, ընդ նմին և արձակէ ի գանձապահութենէ զնոյն Եղիազարն վասն ծերութեանն և երեսնամեայ գանձապահութեանն:

1784 ՌՄԼԳ